













Ս. Լուսաւորչի մէջ ժամանակ մը ուսուցչութեամբ կը զբաղի Մովսէս Երզնկացին, որ «գամբարանի սուրբ Լուսաւորչին» Աստուածաշունչ մը կը նուիրէ (Արարատ, 1904, էջ 131-1913, էջ 597): Նա ուսուցչին է Գրիգոր(իս) Երզնկացին, որ հայր կ'անուանէ Կոստանդին Երզնկացին (Հմմտ. Ալիշան, Սիսական, էջ 137. Հ. Մ. Պոստըրեան, Կոստանդին Երզնկացի, էջ 13-14): Յիշատակագրութեան մը մէջ կայ «ի թվ. 229 (1324) ես Կիրակոս վարդապետս բնակեցա(յ) ի լերինս Սուրբ Լուսաւորչիս» (Ալիշան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2329):

Աւետարան մը կը գրուի «ի թվ. Հայոց 200» (1310) ի գաւառին Գարանաղեաց առ դամբանարան Ս. Լուսաւորչին ի լերին Սեպուհ եւ Մանէայր կոչեցեալ ձեռամբ սուտանուն Գրիգորի» (Սրուանձտեանց, Թոր. Աղբ., Բ., էջ 445-446):

Համանուն Գրիգոր 1373ին «յանապատիս Ս. Լուսաւորչի ընդ հովանեաւ Ս. Կարապետի» կը գրէ Աւետարան մը — Յովհ. Արտանեցիի հրամանովը (Թորոս Աղբ., Բ., էջ 325-327. Հմմտ. եւ Քէչեան, Ակն եւ Ակնցին, էջ 39, Բիւզանդիոն, 1902, Թ. 1680, ուր Պարեան Աւագ վանքի կը մերձեցնէ այս յիշատակագրութիւնը):

Քանի մը տարի յետոյ — 1381ին — Եսայի եւ Պաւղոսի թղթերը կը գրուին «ի զուռն սուրբ դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ Սաղիմայ սուրբ Նշանին եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին» (Հմմտ. Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Սանասարեան վարժարանի, էջ 22): Միեւնոյն տեղը երկու տարի յետոյ — 1383ին — Նոր Կտակարան մը կ'արտագրուի (Ալիշան, Հաւաք. Յիշատ. R. B. Casanatense):

1434ին<sup>22</sup> Ղազար Ղրիմեցին կը գրէ ձաւոց մը «ընդ հովանեաւ սուրբ եւ փառաւոր գերեզմանիս Լուսաւորչին մերոյ Գրիգորի...» (Նօտարք, էջ 103):

Քանի մը տարի վերջ — 1442ին — Յովհաննէս գրիչ Ս. Լուսաւորչի Բարսեղ առաջնորդը եւ միաբանները կը յիշէ. «Յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Բարսեղ եպիսկոպոսի եւ գմիարան եղբայրութիւն սուրբ ուխտիս զՅովհաննէս արեղայն գիւղակարն եւ զԹորոս արեղայն՝ զօրինակիս շնորհողն եւ զՄարտիրոս արեղայն՝ զծագ-

<sup>22</sup> Միմէն 1439ին Յայսմաւուրք մը կը սկսի հաս գրել եւ զայն Աւագի մէջ կ'աւարտէ (Տաշեան, Յուց. Միմթ. Մատ., էջ 50):

կողն եւ զԱրքաճամ արեղայն՝ զգասաւայրն եւ զԱւետիք արեղայն եւ զՄեղիտոն արեղայն եւ զայլ միաբան սուրբ ուխտիս յիշեցէք<sup>23</sup>» (Նօտարք, էջ 129):

Բարսեղի առաջնորդութիւնը եւ միաբաններէ կարեւոր մաս մը կը յիշուին հետեւեալ յիշատակագրութեան մէջ. «Գրեցաւ (1445ին) եւ ոսկով զարդարեցաւ սուրբ Աւետարանս... ձեռամբ սուտանուն արեղայի Յովհաննիս ի մէջ երկուց դաւառաց Եկեղեաց եւ Գարանաղեաց առ դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչիս եւ սուրբ Փրկչիս ի յետն Սեպուհ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Բարսղի եւ ի վարդապետութեան քաջ բարունուոյն Յովհաննէսի եւ զրոց աշակերտաց նորին տէր Արքաճամին եւ Մարտիրոսին եւ Աստուածատրին եւ Աւետիքին եւ զարեօք պատեալ ձերունին զտէր Թորոսն եւ Յովհաննէս փակակարն, զՍարգիս Ապահունեցին, զԳրիգոր Համէլեցին եւ զՀայրապետն եւ զայլ միաբան սուրբ ուխտիս զմեծ եւ զփոքր յիշեալիք» (Նօտարք, էջ 135):

Բարսեղի յաջորդ կ'ընտրուի Մատթէոս կրօնաւորը, որուն օրով 1449ին Երեմիա կրօնաւորը Աւետարան մը կ'արտագրէ «ի հրօշակաւոր անապատն սուրբ Լուսաւորչին» (Նօտարք, էջ 161, Թորոս Աղբար, Բ., էջ 423-424, Բիւզանդիոն, 1902, Թ. 1680, ուր Պարեան այս յիշատակագրութիւնն Աւագ վանքի կը մերձեցնէ):

Գուցէ Մատթէոսի յաջորդն ալ ըլլայ Գրիգոր, զոր 1464ին կը յիշէ Ստեփանոս յիշատակագիրը (Հմմտ. Աւագ վանքը):

«Յերկիրն Կամախայ ի գաւառն սուրբ Լուսաւորչին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Տիկինին եւ սուրբ Աստուածածնին» 1457ին կը գրուի Մաշտոց մը (Նօտարք, էջ 187) եւ 1480ին գրուած Գանձարան մը Ս. Լուսաւորչի կը նուիրուի (Թորոս Աղբ. Բ. էջ 308, Հմմտ. Աւագ վանքը):

Այս գրուելն Ս. Լուսաւորչի քանի մը նուիրատուներ կ'ունենայ՝

«Ես Գամալ խաթունս Աւգին դուստր, որ տուի զիմ թանջերայն ի Ջորեհանդիստն սուրբ Լուսաւորչին գերեզմանին ի յիշատա-

<sup>23</sup> 1429ին գրուած յիշատակագրութեան մը մէջ կը կարդանք «Որոյ (Մաշտոցի) ցանկացաւ կղեալ... Վաղոսեցի Յովաննէս երէց... որ եւ երես երեք հարիւր սպիտակ մատաղի ի Լուսաւորչի գերեզմանն Ջորեհանդիստ կոչեցեալ Ղազար վարդապետի ձեռքն...: Յառաջնորդութեան սուրբ ուխտիս (Ջորեհանդիստ կոչեցելոյ) Ղազար վարդապետիս» (Նօտարք, էջ 91-92):

կութիւն յաւիտեանս յաւիտենից ինձ եւ ծնաւդաց իմոց եւ այլ ի մարդ հետ գրուց չունի... հետ իմ թանջերին գրուց չունի ոչ առաջնորդ ուխտիս որ կամ ծախեն կամ դրաւ դնեն կամ ի վանացս հանեն թվ. ԼճԺ (1461)»:

Գարձեալ ուրիշ գրէ՝ «Ես Գոհարյազիկս ի յԱխոռէն դուստր Թագորչահին որ զնեցի զխանակին արտն Գճ. սպ. ու զբի սուրբ Լուսաւորչին գերեզման ինձ յիշատակ»:

Նորէն՝ տարրեր գրէ՝ «Ես Մկրտիչս որդի Քրիստոստրեն ի յԱխոռէն որ տուի ձ. սպ. ի Մայիլոյ քարն ի Լուսաւորչին դուռն ի յիշատակ ինձ...» (Ալիշան, Հ. Ն. Հաւաք. Յիշատ. Paris, Bibl. nat. 79, Գանձարան):

Առ սուրբ գերեզմանին մեր Լուսաւորչին կը գրուի Ծարակնոց մը՝

«Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Ծարակնոց, ձեռամբ մեղապարտ եւ անիմաստ փձուն գրչի Յովաննէս եպիսկոպոսի ի գաւառս Գարանաղեաց որ ասի Կամախ ի մանին մեր Լուսաւորչին եւ այլ ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ ի թվարեւոյսը որ աստ կան հաւաքեալ ի թվարեւոյսը Մարտ ամսոյ ի Ժ. եղև աւարտ գրոյս այսմ իկ: Արդ յերեսս, անկեալ աղաչեմ զլասս սրբանեալ քահանայիցոց, որք տեսանէք զասս յիշեալիք յաղաթն ձեր զտէր Ներսէսն դուստրչին իմ եւ զՅովաննէս վարդապետն եւ զԱրքաճամ վարդապետն, այլ եւ զգրիս ծանուցողն զԱւետիք վարդապետն եւ զիս զմեղաւք լցեալս եւ յուղիղ ճանապարհէ հեռացեալս, զծրոյ սորայ, եւ զԽաչատուր արեղան, որ զմեր պէտքն եւ զկարիքն հոգայր անձանձիւր եւ զսարկաւազն մեր զՂարիպէան որ բազում աշխատութեամբ սպասաւորէր մեզ...» (Ալիշան, Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բէյրութ եւ այլուր):

Իսկ 1530ին Խաչատուր գրիչ «ի մեծափառ եւ հռչակաւոր անապատս սուրբ Լուսաւորչին» կը գրէ Մանրուածունք մը (Ալիշան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. առնուած Մաւանեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. ցուցաւարանեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. ցուցակէն Թ. 1685):

Ս. Լուսաւորչի մէջ ապրած եւ սորված է Գր. Գարանաղցին Պարոն ճգնաւորին հըսէ կողմէն ներքեւ Յակոբ Թաւրիսի օրով: Նա բաւական տեղեկութիւններ տուած է այն

վանքին մասին: Հոն է նաեւ ուր գործած են Պարոն ճգնաւորը, անոր եկեղեցւոյն Մաղաքիա վարդապետը զբակալ մը շինել կու տայ: Սոյն եկեղեցւոյն մէջ Մեղիսեղ Զերիսա արեղան շատ խեղճ քարոզ կու տայ: Վանքը աւազակներու դէմ կը պաշտպանէ Յովհաննէս Գարձար արեղան (Գր. Գարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 339, 341-344, 420-421, 509-512, 593, Հմմտ. եւ նոյնին հրատարակչին տողերը կամ յառաջարանը, էջ ԺԱ-ԺԳ<sup>24</sup>):

Յաւելունք: Հաւանականաբար հոս է որ 1636-1643ի շրջաններուն Կարապետ Գանձարան մը կը գրէ «ի լեռն Սեպուհոյ ի սուրբ անապատիս դրան սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս եւ երագահաս սուրբ Մինասայ եւ սուրբ Տղա սուրբ Գրիգորի եւ սուրբ երեք մանկանցն եւ սուրբ ծիրանեացն ի հայրապետութեան Ներսէսի եւ ի փակակալութեան կուսակրան Երեմիայ արեղային...» (Տաշեան, Մայր Յուց., էջ 423, Պարեան այս յիշատակարանն ալ Աւագի կը մերձեցնէ, Բիւզանդիոն, 1902, Թ. 1680):

Գուցէ հոս է որ Յովհաննէս Երէց 1746ին Արիստոտէլի Ստորոգութեանց լուծմունքը կը գրէ (Կարենեանց, Յուց. հայ. Ձեռ. էջմ. Թ. 1903):

Յայսմաւուրքի մը յիշատակագրութեան համեմատ Յարութիւն քահանայ Սերաստացին շատ նպաստած է Ս. Լուսաւորչի վանքին, թէեւ տառապանքներու ենթարկուած, սակայն չէ ընկրկած իր ձեռնարկին մէջ (Արեւելք, 1886, Թ. 853): Սեպուհի այս վանքին միաբան էր (1773ին) Կարապետ վարդապետ ձօնձօն կոչուածը (Հ. Գր. Գալմբեարեան, Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան... էջ 337):

Այս Աւագ եւ Ս. Յակոբի վանքերու վանահայրութիւնը գրեթէ մէկ ու կէս դար անընդհատ իր ձեռքին մէջ ունեցած է Փրոխորոնեան ընտանիքը (տէր Յարութիւն, տէր Վրթանէս, տէր Վարդան եւն, Հմմտ. Սիւրմէնեան Գ. Երզնկա, էջ 91):

Վերը յառաջ բերուած յիշատակագրութիւնները զժրախտարար Ս. Լուսաւորչի վանահայրերու շատ սակաւներու անունները յիշեր են: Գարձեալ՝ անոնք թէեւ վանքը զիտեն մեծահռչակ ու անուանի, սակայն

<sup>24</sup> Երզնկայի եւ Սեպուհ Ս. Լուսաւորչի վանքի առաջնորդ էր Կ. Պոլսոյ պատրիարք Աւետիք, որ իր վերջին տարիները Գաղղիս անցուց (Չամչեան, Պատ. Հայոց, Գ.):

